

Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի ելույթը Բուժաշխատողի օրվա կապակցությամբ

21.06.2017թ.

Հարգելի բուժաշխատողներ:

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեր տոնը:

Ուզում եմ երախտիքի խոսք հղել ձեզ և մեր բազում այն բժիշկներին, բուժքույրերին ու մայրապետերին, ոլորտի բոլոր աշխատողներին, ովքեր բարձր պատասխանատվությամբ և անմնացորդ նվիրումով գիշերուզօր իրենց կարևոր ներդրումն են ունենում մարդկանց կյանքի և առողջության պահպանման գործում:

Առանձնահատուկ շնորհավորում եմ այն բուժաշխատողներին, ովքեր այս տոնական օրն անց են կացնում վիրահատարաններում, վերակենդանացման բաժանմունքներում՝ հիվանդների մահճակալների կողքին, շտապօգնության մեքենաներում, ինչպես նաև ռազմական բժիշկներին, ովքեր հոգ են տանում մեր երկրի անառիկությունը պահող հայ զինվորների առողջության համար:

Կայուն և դինամիկ զարգացող առողջապահական համակարգը մեր հայրենիքի ընդհանուր զարգացման հիմնական և կարևոր ուղղություններից է: Կառավարությունը, մարզային իշխանությունը, տեղական ինքնակառավարման մարմինները, միավորելով նաև բարեգործական հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների հնարավորություններն ու ջանքերը, ձեզ հետ միասին ծրագրեր ենք իրականացնում բնակչությանը որակյալ և մատչելի բժշկական ծառայություններ մատուցելու, բուժհաստատություններն արդիականացնելու, ախտորոշման և բուժման նորագույն մեթոդներ ներդնելու ուղղությամբ:

Անցած մեկ տարում մարզի առողջապահական շուրջ 20 հիմնարկներում վերանորոգումների, կահավորման, նոր սարքավորումներ ձեռք բերելու և նոր ծառայություններ ստեղծելու

համար իրացվել է 180 միլիոն 788 հազար դրամ, որից շուրջ 22 միլիոնը՝ սեփական միջոցներով: Վերջին հինգ տարում սեփական միջոցներով ներդրումները կազմել են ավելի քան 240 միլիոն:

Ծրագրերի իրականացումն ու բարենորոգումները հսկայական դրական ազդեցություն են ունենում մարզում առողջապահության խնդիրներն առավել բարձր մակարդակով լուծելու գործում:

«Հայկական ակնաբուժական նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից Սպիտակի բժշկական կենտրոնում մարզային ակնաբուժական կենտրոնի ստեղծումն, օրինակ, ոչ միայն Լոռու մարզի, այլև տեսողության խնդիրներ ունեցող այլ տարածաշրջաններում ապրող բազմաթիվ մարդկանց համար փրկօղակ հանդիսացավ: Ստեղծման օրվանից այստեղ կատարվել է շուրջ 450 վիրահատություն:

Սպիտակ քաղաքում «Բաց հասարակություն» հասարակական կազմակերպության հետ համատեղ ստեղծվեց հոգեկան առողջության կենտրոն՝ նախատեսված 16 հիվանդների համար:

Վանաձորի բժշկական կենտրոնին ՀՀ նախագահի հրահանգով տրամադրվել է ժամանակակից սարքավորումներով հագեցած շտապօգնության երկու նոր մեքենա, որոնք հնարավորություն են տալիս ապահովելու ավելի որակյալ, հասանելի, անհետաձգելի շտապբուժօգնություն: Աստիճանաբար կթարմացվեն նաև մարզի շտապօգնություն իրականացնող ընկերությունների ավտոպարկերը:

Այսօր տեղին եմ համարում բոլորիս անունից շնորհակալական խոսք ուղղել հանրապետության նախագահին և վարչապետին, առողջապահության նախարարությանը, տարբեր միջազգային բարեգործական կազմակերպություններին, բոլոր այն անձանց և կազմակերպություններին, ովքեր օժանդակել և մասնակցել են Լոռու առողջապահության զարգացմանն ու բարենորոգումներին:

Հարգելի բարեկամներ, Լոռու մարզի առողջապահության ոլորտի զարգացումը շարունակական բնույթ է կրում և մոտ ապագայում մենք ձեզ հետ նոր բարեփոխումների ու զարգացումների ականատեսը կլինենք: Շարունակվում են «Վանաձորի բժշկական կենտրոնի» շենքի կառուցման աշխատանքները, որի համալիրում ծննդատան կառուցումն ու բժշկական սարքավորումներով ապահովումը իրականացվում է

«Տաշիր» հիմնադրամի կողմից: 2018թ. սկզբին կենտրոնը կբացի իր դռները և լայն հնարավորություններով ու ժամանակակից բուժսարքավորումներով բարձրակարգ բուժօժանոթություններ կմատուցի ոչ միայն Վանաձորի, այլև, հարկ եղած դեպքում, մարզի բնակչությանը:

Ընթացքի մեջ են «Ստեփանավանի բժշկական կենտրոնի» համաբուժարանի մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքները:

Չնայած, որ տարեցտարի բարելավվում են մարզի գյուղական համայնքներում գործող ամբուլատորիաների և բուժական կաբարձական կետերի շենքային պայմանները, այնուամենայնիվ, շատ բուժկետեր դեռևս կարիք ունեն վերանորոգման, վերակառուցման կամ հիմնովին կառուցման: Սա, անշուշտ, շարունակական աշխատանք է: Շարունակական բնույթ է կրում նաև բժշկական անձնակազմի վերապատրաստման գործընթացը:

Հարգելի բարեկամներ, ինչպես գիտեք, հանրապետությունում սկսվել է էլեկտրոնային առողջապահության տեղեկատվական համակարգի ներդրումը, որն ուղղված է ավելի մատչելի, թափանցիկ բուժօգնության ցուցաբերմանը, բուժօգնության որակի բարելավմանը, ռեսուրսների հասցեական օգտագործմանը: Էլեկտրոնային առողջապահության տեղեկատվական համակարգի ներդրումը հնարավորություն կտա նաև ավելի արդյունավետ պայքարել կոռուպցիոն դրսևորումների դեմ:

Կոչումով բժշկին բոլոր ժամանակներում էլ բնորոշ է եղել անկեղծ կարեկցանքը, ինքնազոհությունը, սրտացավությունը, պատասխանատվության բարձր զգացումը :

Այդ գիտակցումով ու ձգտումով էլ շարունակելու ենք աշխատել:

Կրկին շնորհավորում եմ Ձեր մասնագիտական տոնը, մաղթում քաջառողջություն և աշխատանքային հաջողություններ: